ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ·

Փետրվար· 1· Սինոդը հրամայեց թոյլ տալ Տիխիսի Հայոց Կոնսիստորիային Յունուարի 18 թուով 133 թ· յայտարարութեան համաձայն, մանել ամուսնութեան Կարդախեցի Համբարձում Բաբելեանցին Հայկանուշ Սուքիասեանցի հետ, աղգակցութեան ութներորդ աստիճանի, նոյնպէս պատուիրեց ութներորդ աստիճանի թոյլատուութեան համար չդիմել Սինոդին, այլ Կոնսիստորայն ինքնին հրաման տալ այդպիսիներին։

Փետր· 1· 17· 19· 22· Երևանի Կոնսիստորիայի 133· և 299 թ· Յունուարի 22 և 31 ի յայտարարութեանց համեմատ Սինոդը հրամայեց թոյլ տալ մանել ամուսնութեան Մատարեցի Գէորգ Մուրատեանցին կատարինայ Գէորգեանի հետ, Թմբուլցի Հայրապետ Ալոյեանին Գայանէ Պողոսեանի հետ խնամական հինգերորդ աստիճանի, Ադարականի Կոնսիստորիայի 50 թ 11 Յունուարի՝ Կարապետ Բարոյեանցին Կատարինէ Ալանեանցի հետ։ Ղարաբաղի Կոնսիստորիայի թ· 1806· 1750· 135· Դեկ· 25· 30 և Փետր· 5· անցեալ 1892 ամի, Վարդաշէնցի Ալէքսան Դիլուզդուլեանցին՝ Մարիամ Յովհաննիսեանցի հետ, Սարգիս Սափարեանցին՝ Ղումաշ տէր Գրիգորեանցի հետ, Անդրէաս Մելքոմեանցին՝ Խանում Ասկարեանցի հետ։ 1893 ամի թ· 14· 50· 24· 85· 72· 70· Գիրգաղուշցի Հայրապետ Թորոսեանցին՝ Շուղի Բաղրեանցի հետ, Դալուստ Մովսիսեան Թունեանցին՝ օր· Շահնազար Հայրապետեանցի հետ։ Համբարձում Մկրտումեանցին՝ նախ-

շուն Ղազրամանեանցի հետ։ Բէգլար Հայրապետեանին՝ Ռեհան Սարուխանեանի հետ։ Բարսեղ Յովսէփեանցին՝ Գոլոյ Դանիէլեանցի հետ։ Գրիգոր Գասպարեանցին՝ Սոնա Ստեփանեանի հետ։ Սիմէօն Հաշամեանցին՝ Մարիամ Մկրտչեանի հետ։ Եւ Տփխիսի կոնսիստորիայի թ. 79. 196. 132. 197. 200. 195. 241. 311 250. 282. 4623. Շուլաւերցի Աբգար Մարութեանցին՝ Վառվառէ Մելիք Ադամեանցի հետ։ Արակավայի Վարդան Խաչատրեանին՝ Թագուհի Աթանասեանի հետ։ Ղանդաւուրեցի Սարգիս Յարութիւնեանցին՝ Նունէ Մամայեանի հետ։ Դուշէթցի Բարսեղ Աստուածատրեանցին՝ Մարգարիտ Լուրուսեանցի հետ։ Աղաջուրցի Ալիբէկ Վարդումեանցին՝ Մագթաղ Խաչինեանցի հետ։ Կոթեցի Ղազարոս Մովսիսեանին՝ Հեղինար Թադէոսեանի հետ։ Շուլաւէրցի Կոնո Սարիբէգեանցին՝ Կեկել Միրաքեանցի հետ։ Սև քարեցի Սարգիս Վարդանեանին՝ Գիւլիզար Մինասեանցի հետ։ Բագարատ Աբովեանին՝ Սոնա Դանիլեանցի հետ։ Կորխեցի Մկրտիչ Երզնկեանցին՝ Թագուհի Յովհաննիսեանցի հետ Ծուղրութցի Գէորգ Աղէկեան Պալասանեանցին՝ Անահատ Յարութիւնեանցի հետ։

—

Փետր. 1. Տփխիսի Հայոց Կոնսիստորիայի թ. 4303 24 Դեկ. 1892 յայտարարութեանը համեմատ հրամայեց ուղարկել Կովկասի քաղաքական մասի Պ. Կառավարչապետին Փոթեցի Հանգուցեալ Կարապետի Ժառանգաց կալուածագիրը ընծայաբերութեան թերթերի հետ և խնդրել միջնորդելու Ա. մասի քարտաքական օրինաց ԺԱ. հատորի 1011 և 1012 յօդուածների համեմատ Փոթիի եկեղեցու տեսչութեան տակ առնելու նուիրողների անշարժ կալուածը։

—

Փետր. 1. Սինոդը շրջաբերական հրամանով պատուիրեց Հայոց թեմական Ատեաններին 1887 թուին ի լոյս ընծայուած 1 մասի XI հատորի 13 և 14 հատուածի 955 յօդուածի համեմատ 1892 թուականի համար կազմել ցուցակ ինչ ինչ ծանօթութեամբ տարեկան հաշիւների վիճակների և մինչև Ապրիլի վերջը մատուցանել Սինոդին երեք երեք օրինակ a, б, в, г, տառերի ներքոյ։

Փետր. 1. Տփխիսի Հայոց Կոնսիստորիայի միջնորդութեան համեմատ Սինոդը յանձնեց Գեր. Յովհաննէս եպիսկոպոս տէր Յարութիւնեանցին, Մոսկէս գիւղացի Յովհաննէս տէր Սարգսեան Բաղալեանցին ձեռնադրել քահանայ և ձեռնադրութեան վկայականը մատուցանել Սինոդին ի հաստատութիւն։

—

Փետր. 3. Սինոդը պատուիրեց Տփխիսի Հայոց Կոնսիստորիային մկրտել հրէուհի Սոֆիա Կուզիադին ըստ արարողութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ։

—

Փետր. 10. Ըստ յարատարութեան Ելիսաւէտապոլի հոգևոր կառավարութեան թ. 36. Սինոդը հրամայեց թոյլ տալ ծախսել Էջմիածնապատկան ագու պարոպի նորոգութեան համար 29 բուբլի։

—

Փետր. 12. Սինոդը հրամայեց Տփխիսի Հայոց Կոնսիստորիային Գէորգ Միքայէլեան Սոլաղեանցին ընդունել ի հոգևոր տեսչութիւն և կարգել Գորու գաւառի Զեգվ գիւղի եկեղեցուն սպասաւոր։

—

Փետր. 12. Սինոդը պատուիրեց բոլոր թեմական Առեաններին և նոցա միջոցաւ բոլոր հոգևոր վարչութիւններին թոյլ չտալ այսուհետև օտարահպատակ հոգևորականներին իւրեանց վիճակներում վարել պաշտօն առանց Սինոդի հրամանի։

—

Փետր. 12. Սինոդը պատուիրեց Վանական կառավարութեան նոր կարգուած անդամներին ստանալ Սինոդից կարևոր համարուած գրամները և արած ծախսերը գրել պատշաճաւոր տումարների մէջ սահմանած կարգով և ամսէ ամիս ներկայացնել ի գննութիւն։

—

փետր. 19. Սինոդը հրամայեց Տփխիսի կոնսիստորիային Սիմէօն քահանայ Սարգսեանցին թողնել միշտ Դերբ. իսկ Ջերգ գիւղում կարգել ուրիշ քահանայ։

—

փետր. 19. Սինոդը պատուիրեց Նախիջևանի Հայոց հոգևոր կառավարութեան թոյլ տալ Շահնազարեան Գրիգոր քահանային վարել իւր պաշտօնը Նարմիջայ գիւղում մինչև նորա գործերին հասու լինելը։

—

փետր. 19. Սինոդը կարգադրեց ուղարկել Նովօ-Գրիգորիեվսկի գաւառի Ղարաջալիւցի Մինաս Եփրեմեան Մարգարեանցի հարկից արձակման վկայականը Ստաւրապօլի Նահանգապետին և խնդրել նորա տնօրէնութիւնն, թոյլ տալու նորան մնալ հոգևոր տեսչութեան մէջ Ղզլարի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ սպասաւորութեան համար։

—

փետր. 19. Սինոդը Երևանի Հայոց կոնսիստորիայի Ալիղամարեցի Պարթև Մկրտչեանի քահանայութեան մասին արած միջնորդութիւնը մերժեց, քահանայացուի ուսումն չունենալու համար։

—

փետր. 19. Սինոդը Երևանի Հայոց կոնսիստորիայի յայտարարութիւնն Յովհաննէս քահանայ Տէր-Վարդանեանի Տաճկաստան գնալու մասին թողեց անհետևանք։

—

փետր. 22. Սինոդը բոլոր Թեմական Առաջնորդներին հրամանագրութեամբ պատուիրեց մինչև ներկայ տարուայ Յունիս ամսի 1-ն ճիշտ և լիակատար տեղեկութիւն հասցնել իրան Մայր Աթոռի կալուածների, շէն և անապատ վանքերի և եկեղեցիների համար առանձին առանձին ցոյց տալով իւրաքանչիւրի չափն և սահմանը նկարագրելով հերկելի հողերի, այգիների և անտառ-

ների որակութիւնը և նոցա եկամտից ու բերքերի քանակութիւնը։

—

Փետր. 22. Սինոդը պատուիրեց Ղարաբաղի Թեմի Առաջնորդին յայտնել, թէ Սէյիտաշէնցի Միքայէլ Սարուխանցը ո՞ւմ հրամանով և որքա՞ն վայտ է կտտորել Ս. Գէորգ և Ս. Յակոբ վանքերի անտառից, և ինչի՞ համար է գործ դրել և թէ՞ Գանձասարի վանքի վանահայր Ստեփան վարդապետ Շիրակունին որի՞ թոյլտուութեամբ կտրում է վանքի անտառը, վանք գիւղի հերկելի հողերի մասն սերմանում իւր անձնական օգտին և բազմաթիւ անասունների թոյլ տալիս արածելու արօտատեղիներում առանց տակի (չոպբաշի)։

—

Փետր. 22. Սինոդը հրամայեց հաստատել Երևանի Հայոց Կոնսիստորիայի վճիռը վեցամսեայ եկեղեցական ապաշխարութեան ենթարկելով Պօղոս քահանային և 20 ռուբլի տուգանք ստանալով, իսկ Սահակ քահանայ Սմբատեանցին յանդիմանելով։

—

Փետր. 22. Սինոդը հրամայեց թոյլ տալ Տփխիսի Ս. Սարգսի վանահօրը պայմանաւորուել որմնադիր Սարգիս Մեհրապետանցի հետ պարսպի խախտուածը նորոգելու համար։

—

Փետր. 22. Ս. Էջմիածնի վանական կառավարութեան թ. 4 յայտարարութեան համեմատ Սինոդը հրամայեց Մայր Աթոռի Գանձապահին տալ ցունուար և փետրուար ամիսների ընթացքում Մայր Աթոռի, Ճեմարանի և Տպարանի ծախուց համար 11000 ռուբլի։

—

Փետր. 24. Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ Հայոց Կոնսիստորիայի թ. 1710 յայտարարութեան համեմատ Սինոդը հրամայեց թոյլ տալ Թոխատեցի Եղիսաբէթ Գասպարեանին մնալ նոր ամուս-

նութիւն իւր այր խաչատուր Եփրեմեան կուրոնկովի անգարձ ազատորուելու համար։

—

Փետր. 24. Տփխիսի Հայոց կոնսիստորիայի միջնորդութիւնը Գէորգ. Ղուկասեանցի հոգևոր կոչման մէջ մտնելու մասին Սինոդը մերժեց. Իւր շրջաբերականի համեմատ ուսումն չունենալու պատճառաւ։